

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻՋՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՐԹԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մ. Ռ. ԵՐԻԱԶԱՐՅԱՆ, Լ. Յ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վարչահրամայական համակարգի փլուզումը հանգեցրեց տնտեսության բոլոր ճյուղերում ու ոլորտներում արտադրության կտրուկ անկման, որի հետևանքով խիստ մեծաքանակ սոցիալական լարվածությանը նպաստող գործազրկության մակարդակը: Այդ խիստ բեկումնային ժամանակաշրջանում քայքայվեցին տասնամյակների ընթացքում նախկինում ձևավորված ներքին և արտաքին տնտեսական կապերը, էապես կրճատվեցին հայկական ապրանքների իրացման ծավալները: Այս պայմաններում, ինչպես և սպասվում էր, պլանային մեխանիզմի հնարավորություններով ու պահանջներով գործող տնտեսական միավորները (հատկապես խոշոր ձեռնարկությունները) չկարողացան արագ և ճկուն ձևով հարմարվել կազմավորվող շուկայական հարաբերություններին:

ՀՀ-ում ներկայումս տնտեսական դաշտում տիրում է մի վիճակ, երբ տնտեսական նկատելի ակտիվության հետ մեկտեղ չեն ձևավորվում և, հավանական է, մոտ ժամանակներում հազիվ թե ձևավորվեն խոշոր ձեռնարկությունները: Դա մասնավորապես բացատրվում է ոչ տարողունակ ներքին շուկայով և հնարավոր արտահանման փոքր ծավալներով: ԽՍՀՄ գոյության տարիներին Հայաստանում գործել են մեր տարածաշրջանի համար խոշոր համարվող մի շարք ձեռնարկություններ (յուրաքանչյուրում 10 հազար և ավելի աշխատող): Սակայն դրանց գործունեությունը պայմանավորված էր վարչահրամայական տնտեսության գործող օրենքներով, ռեսուրսների ներմուծման մեծ հնարավորություններով և արտահանման հսկայական շուկայով:

Պլանային տնտեսության փլուզման գործընթացը առանձնապես բացասաբար անդրադարձավ խոշոր ձեռնարկությունների վրա, որոնք, գրկվելով պատվիրատուներից և հումքի ու նյութերի ներմուծման հնարավորություններից, շատ արագ դադարեցրին իրենց գործունեությունը (հաճախ նախքան սեփականաշնորհումը և կամ անմիջապես դրանից հետո): Մի տնտեսակարգի պայմաններում լինելով հզոր, առաջատար մյուսում դրանք միանգամից դարձան ավելորդ, քանի որ անցումային տնտեսության պայմաններում շուկան նոր է սկսում ձևավորվել, որին նախ պետք է հարմարվեն փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք միայն որոշակի ժամանակաշրջան անցնելուց հետո կարող են (եթե դա պահանջի շուկան) ավելացնել իրենց արտադրության և ծառայության ծավալները: Ինքնին հասկանալի է, որ տնտեսության անցումային փուլում, երբ շատ ապրանքների պահանջարկը բավական հեռու է քիչ թե շատ կայուն լինելուց, փոքր և միջին ձեռնարկությունները, լինելով ավելի ճկուն շուկայի փոփոխության նկատմամբ, անհամեմատ ավելի հեշտությամբ են հարմարվում շուկայական փոփոխություններին, մինչդեռ խոշոր ձեռնարկությունների համար բնորոշ միավոր արտադրանքի վրա ընկնող նվազագույն տնտեսական ծախքերի ապահովումը անցումային տնտեսության փուլում առանձնապես չի կարևորվում:

Մեր հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի գործունեության համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին հողի, պետական գույքի և ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացների իրականացման շնորհիվ: Չնայած ստեղծվեց սեփականության բոլոր ձևերը ներկայացնող ձեռնարկատերերի խավ, սակայն վերը նշված գործընթացներն ունեցան որոշակի թերություններ, որոնք մեծապես խանգարեցին տնտեսության մեջ այդ կարգի բիզնեսի համար գործարար ակտիվության ապահովմանը:

ՀՀ-ում ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների կենտրոնացված պարտադիր

գրանցումը սկսեց իրականացվել 1994-ից՝ համաձայն «Պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի (02.09.1993): 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել են 109892 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 61823 անհատ ձեռներեց և 48069 ձեռնարկություն¹: Սակայն ՀՀ-ում չի տարվում փոքր և միջին ձեռնարկությունների առանձին վիճակագրական հաշվառում, և բացակայում է այդ ոլորտի մասին ամբողջական տեղեկատվությունը: Ավելին, պետական ռեգիստրը ստեղծվող ձեռնարկությունները չի դասակարգում ըստ իրենց չափերի, որն ինքնին դժվարացնում է դրանց համակարգումն ու ուսումնասիրությունը:

Ասենք նաև, որ տնտեսագիտական գրականության մեջ չկա փոքր և միջին ձեռնարկությունների միասնական դասակարգում, որովհետև դրանք էապես տարբեր են տարբեր երկրներում: Օրինակ, եթե Գերմանիայում փոքր են համարվում մինչև 50 աշխատող ունեցող ձեռնարկությունները, իսկ միջին՝ մինչև 500 աշխատող ունեցող ձեռնարկությունները, ապա ԱՄՆ-ում փոքր են համարվում մինչև 500 աշխատող ունեցող ձեռնարկությունները: Ավելին, փոքր և միջին ձեռնարկությունների բնութագրման համար կարևոր է ոչ միայն նրանցում ընդգրկված աշխատողների թվաքանակը, այլև թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների, ինչպես նաև վաճառքի ծավալները, ընդհանուր հաշվեկշռային արժեքը, տեխնիկական հագեցվածության աստիճանը և այլն:

Եվրոստատի չափորոշիչներով ըստ աշխատողների թվի տարբերվում են չորս տեսակի ձեռնարկություններ².

- 1) միկրոձեռնարկություններ՝ 1-9 աշխատող:
- 2) փոքր ձեռնարկություններ՝ 10-49 աշխատող:
- 3) միջին ձեռնարկություններ՝ 50-249 աշխատող:
- 4) խոշոր ձեռնարկություններ՝ 250-ից ավելի աշխատող:

ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունները սահմանվում են համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցման մասին» ՀՀ օրենքի: Ըստ այդ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունները դասակարգվում են հետևյալ ձևով.

1. Գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը չի գերազանցում հինգ մարդուց:

2. Փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը չի գերազանցում

ա) արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 50,

բ) շինարարության և էներգետիկայի բնագավառներում՝ 25,

գ) գիտության և կրթության բնագավառներում՝ 25,

դ) տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառներում՝ 15 մարդուց:

3. Միջին առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը չի գերազանցում

ա) արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 100,

բ) շինարարության և էներգետիկայի բնագավառներում՝ 50,

գ) գիտության և կրթության բնագավառներում՝ 50,

դ) տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառներում՝ 30 մարդուց:

Փորձագիտական տվյալները վկայում են, որ 2003 թ. հունվարի 1-ի դրությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտների թվաքանակը մեր հանրապետությունում կազմել է 107500 կամ ձեռնարկությունների ընդհանուր թվի մոտ 98 %-ը, նրանց մասնաբաժինը ՀՆԱ մեջ եղել է 35 %:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 2003, էջ 113:

² Տե՛ս «EUROSTAT. Annual Account of 1998», էջ 171:

³ Ըստ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ազգային կենտրոն (ՋԱԿ)» հիմնադրամի փորձագիտական տվյալների, որոնք ստացվել են ՀՀ վիճակագրության վարչության պաշտոնական տվյալների հիման վրա:

**Հայաստանի Հանրապետությունում 2002 թ. գործող փոքր և միջին
ձեռնարկությունների դասակարգումը ըստ գործունեության ոլորտների¹.**

Գործունեության ոլորտ	ՓՄՁ քանակը	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ %-ներով	Թողարկված արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ %-ներով
Արդյունաբերություն	1633	90	31.2
Բնակչությանը մատուցված ծառայություններ	2600	77.6	34.7
Խանութների միջոցով իրականացված մանրածախ առևտուր	5164	99.2	51.2
Չանրային սնունդ	642	98.9	81.1
Սպառողական ապրանքների իրացման շուկաներ	58	93.5	38.3
Կրպակներ	7187	100	100
Տրանսպորտ, տրանսպորտային բեռնափոխադրումներ	34	45.5	14.2

Այդուսակի տվյալները վկայում են, որ ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների քանակը և մատուցված ծառայությունների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ ամենամեծն է առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտներում, իսկ ամենափոքրը՝ տրանսպորտի, տրանսպորտային բեռնափոխադրումների ոլորտում: Արդյունաբերությունում գործող 1633 ձեռնարկություն (90 %) փոքր և միջին են, սակայն նրանց թողարկած արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կազմել է ընդամենը 31.2 %:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Երևանում գերակշռում է ձեռնարկությունների թիվը (53 %), իսկ մարզերում՝ անհատ ձեռներեցների (57 %): Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այսօր անհատ ձեռներեցները գյուղերում կարողանում են իրականացնել մթերքների նախնական վերամշակման և իրացման որոշակի աշխատանքներ: Այդ աշխատանքների ծավալների ավելացումը և ձեռնարկությունների ստեղծումը կապված են կազմակերպական, տեխնիկական և ֆինանսական բազմաթիվ դժվարությունների հետ: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեությունը մարզերում զարգանում է անհավասարաչափ, որը բացատրվում է մարզերի (հատկապես Երևանից և հիմնական հաղորդակցման ուղիներից հեռու գտնվող մարզերի) տնտեսական զարգացման ցածր մակարդակով և փոքր ու միջին ձեռնարկատիրության գործունեության տարածքային առանձնահատկություններով: Դա էլ իր հերթին անմիջականորեն պայմանավորում է մարզերի բնակչության տնտեսական ու սոցիալական ոչ բավարար վիճակը: Ըստ «Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ» հիմնադրամի փորձագիտական տվյալների՝ 2002 թ. ՓՄՁ սուբյեկտների համարյա կեսը՝ 46.0 %-ը գործում է Երևանում, իսկ մյուսները ըստ մարզերի բաշխված են հետևյալ կերպ՝ Կոտայքի մարզ՝ 8.7 %, Լոռու մարզ՝ 7.4 %, Արագածոտնի մարզ՝ 3.2 %, Արարատի մարզ՝ 6.8 %, Արմավիրի մարզ՝ 6.7 %, Գեղարքունիքի մարզ՝ 4.8 %, Շիրակի մարզ՝ 5.6 %, Սյունիքի մարզ՝ 5.3 %, Վայոց Ձորի մարզ՝ 1.9 %, և Տավուշի մարզ՝ 3.6 %:

Փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունը պայմանավորված է երկրի տնտեսական հզորության մակարդակով: Ըհիշտ է, տնտեսական զարգացումը և տնտեսական ակտիվությունը փոքր և միջին բիզնեսի գործունեությունը խթանող կարևոր գործոն են, սակայն կյանքը ցույց է տալիս, որ դրանց դերը խիստ կարևորվում է նաև արտադրության ծավալների անկման և անկայունության պայմաններում, քանզի փոքր և միջին բիզնեսը

¹ Ըստ նույնի:

այն ուժն է, որը կարող է շարժել տնտեսությունը նույնիսկ ամենաամպաստ տնտեսական պայմաններում: Միաժամանակ նշենք, որ փոքր ձեռնարկությունների ընդգրկման ճյուղային կառուցվածքը կարող է պատկերացում տալ երկրի տնտեսական զարգացման մակարդակի մասին: Եթե փոքր և միջին ձեռնարկությունները գործում են ոչ միայն առևտրի, սպասարկման և ծառայությունների ոլորտում, այլև տեխնիկայի և տեխնոլոգիայի բարձր զարգացում պահանջող արտադրություններում, ապա կարող ենք ասել, որ գործ ունենք զարգացած տնտեսություն ունեցող երկրի հետ:

Մյուս կողմից՝ կարող ենք ասել, որ որոշ իմաստով այս ոլորտի զարգացման աստիճանով են պայմանավորված տնտեսական համակարգի կենսունակությունն ու ճկունությունը, պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունավետությունը: Բանն այն է, որ եթե փոքր բիզնեսը տվյալ երկրում ազատորեն ծավալվում է տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, ապա դա նշանակում է, որ մենք գործ ունենք շուկայական զարգացած ենթակառուցվածք և տնտեսական հարկային ու վարկային ակտիվ և արդյունավետ քաղաքականություն իրականացնող պետության հետ: Քանի որ փոքր ու միջին բիզնեսն ապահովում է առավել ճկուն, կառավարելի և կանխատեսելի շուկայական իրավիճակ, ուստի այն հանդես է գալիս որպես յուրատեսակ միջանկյալ օղակ տնտեսության պետական կարգավորման և ազատ շուկայական հարաբերությունների համակարգի միջև:

Սովորաբար զարգացած երկրներում փոքր ձեռնարկությունները խոշոր ձեռնարկություններին մատակարարում են հումք, կոմպլեկտավորող հանգույցներ և պահեստամասեր, ինչպես նաև մատուցում բազմապիսի ծառայություններ: Օրինակ, մոտ 50 հազար ոչ մեծ ձեռնարկություններ այս կամ այն չափով մասնակցում են այնպիսի գերհսկաների արտադրական գործընթացներին, ինչպիսիք են «Ջեներալ մոտորզ», «Ֆորդ», «Սիմենս», «IBM», «Ջեներալ էլեկտրիք» ֆիրմաները: Սակայն մեր հանրապետությունում, որտեղ, ինչպես նշեցինք, խոշոր ձեռնարկությունների ձևավորման համար դեռևս ստեղծված չէ անհրաժեշտ տնտեսական միջավայր, փոքր ձեռնարկությունները այս տեսանկյունից առայժմ գրեթե ոչինչ չեն անում: Ըստ այդմ, ՀՀ-ում, մեր կարծիքով, զարգացման մեծ հնարավորություններ ունեն այն փոքր և միջին ձեռնարկությունները, որոնց կողմից առաջարկվող արտադրանքը կամ մատուցվող ծառայությունը կտարբերվի իր յուրօրինակությամբ, նորությամբ, սպառողների պահանջների առավելագույն բավարարմամբ: Այս առանձնահատուկ մոտեցումների անհրաժեշտությունը և հետևաբար նաև կիրառման արդյունավետությունը զգալի չափով պայմանավորված են, այսպես կոչված, ազգային մեմբրալիտետով կամ մտածելակերպով: Կարծում ենք նաև, որ այս գործոնի առավելագույն օգտագործումը կհանգեցնի համեմատաբար աշխատատար արտադրությունների զարգացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այդ տեսակետից մեր հանրապետության համար, կարծում ենք, առանձնապես հեռանկարային են հուշանվերներ, պերճանքի տարբեր առարկաներ, կահույք, կենցաղային և այլ իրեր արտադրող ձեռնարկությունների ստեղծումը, ինչպես նաև մանրածախ առևտրի, ֆերմերային տնտեսությունների, վերամշակող ձեռնարկությունների, բնակչությանը տարաբնույթ ծառայություններ մատուցող ոլորտների զարգացումը:

Այս դեպքում հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ մեր հասարակության բարձր և միջին ապահովվածություն ունեցող խափի հիմնական ճյուղական պահանջները, ըստ էության, արդեն բավարարված են, իսկ նրա եկամուտների անընդհատ ավելացումը, որպես կանոն, բերում է ոչ այնքան սպառման ծավալների ավելացմանը, որքան ապրանքների և ծառայությունների պահանջարկի բազմազանեցմանը և տարբերակեցմանը, ուստի շուկայական տնտեսություն ունեցող մյուս երկրների մեծ մեծ մասն ևս սկսվում է ապաստանդարտացման գործընթաց, այսինքն՝ ապահովված մարդկանց պահանջները զանգվածային սպառման ապրանքներից ու ծառայություններից ուղղվում են դեպի անհատականը (կոնկրետ անձի, ընտանիքի կամ մարդկանց առանձին խմբերի համար), որը ենթադրում է առավել աշխատատար ապրանքներ ու ծառայություններ: Իսկ դա առավելագույնս կարող է լուծել միայն փոքր բիզնեսը: Այս հանգամանքը առավել ևս ընդգծում է մեր հանրապետությունում փոքր բիզնեսի զարգացման այնպիսի հնարավորություններ

րը, որոնք կապված են բնակչության զբաղվածության և նկատելի աճի հետ: Հիմնականում հենց դրա վրա պետք է հիմնվի խիստ տարբերակված ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող փոքր ձեռնարկատիրական բիզնեսի զարգացման ռազմավարությունը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը զբաղվածության ապահովման կարևորագույն գործոն է ցանկացած երկրում: Զարգացած շուկայական տնտեսությունում ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ փոքր և միջին բիզնեսը կլանում է աշխատուժի գրայի մասը: Օրինակ, ԱՄՆ-ում ՓՄՁ սուբյեկտները, որոնք կազմում են գործող ձեռնարկությունների 99 %-ը, ապահովում են նոր աշխատատեղերի մոտ 80 %-ը: Ընապոնիայում փոքր և միջին ձեռնարկություններում (գործող ձեռնարկությունների 99.1 %-ը) աշխատում են զբաղվածների 79.2 %-ը: Գերմանիայում գործող ձեռնարկությունների 99 %-ը փոքր և միջին են, այնտեղ աշխատում է տնտեսապես ակտիվ բնակչության 2/3-ը⁵:

Թեև ՀՀ-ում, ցավոք, չի տարվում փոքր և միջին բիզնեսում զբաղվածների առանձին վիճակագրություն, սակայն ըստ տնտեսության ոլորտների զբաղվածության բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զբաղված բնակչության մեծ մասը ընդգրկված է հենց ՓՄՁ ոլորտում: Այսպես, բնակչության զբաղվածության ամենամեծ տոկոսը արձանագրվել է գյուղատնտեսության ոլորտում՝ 22.3 %, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 13.6 %, վերամշակող արդյունաբերությունում՝ 9.9 %⁶: Ասվածը հաստատում են նաև «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի փորձագիտական տվյալները, համաձայն որոնց 2002-ին խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ՓՄՁ սուբյեկտներում զբաղված են այդ ոլորտում աշխատողների 84 %-ը, հանրային սննդի ՓՄՁ սուբյեկտներում համապատասխանաբար՝ 86.5 %-ը, սպառողական ապրանքների իրացման շուկաներում՝ 42.2 %-ը, արդյունաբերության ոլորտի ՓՄՁ սուբյեկտներում՝ 28 %-ը, բնակչությանը ծառայություններ մատուցող ոլորտի ՓՄՁ սուբյեկտներում՝ 15.9 %-ը, տրանսպորտի, տրանսպորտային բեռնափոխադրումների ՓՄՁ սուբյեկտներում՝ 2 %-ը: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ փոքր և միջին ձեռնարկատիրությունը ՀՀ-ում կարևոր ռազմավարական նշանակություն ունի, ուստի այս ոլորտը բարելավելու և զարգացնելու համար անհրաժեշտ են նպատակային լուրջ միջոցառումներ:

Մեր կարծիքով, հենց աշխատատարությունը, աշխատատեղերի պահպանումն ու ավելացումը պետք է դառնան այն հիմնական չափանիշը, որով պետք է գնահատվի փոքր և միջին բիզնեսի գործունեությունը հանրապետությունում, և իրականացվի այդ ձեռնարկություններին ցուցաբերվող պետական աջակցության գործընթացը: Եթե շուկայական տնտեսությունում ունեցող զարգացած երկրներում փոքր և միջին բիզնեսին ցույց տրվող պետական աջակցությունը հիմնականում ուղղված է այդ ոլորտի ձեռնարկությունների արտաքին շուկաներ դուրս գալուն, բարձր արտադրողական արտադրանքի թողարկմանը և գիտատար արտադրությունների զարգացմանը, ապա անցումային տնտեսությամբ երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, այն առաջին հերթին պետք է օժանդակի զբաղվածության ապահովման ծրագրերի իրականացմանը:

Անցումային երկրներում հույժ կարևոր հարց է պետության միջամտությունը փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորմանը և արդյունավետ գործունեության ապահովմանը: Ոչ լրիվ չափով զարգացած շուկայի առկայությունը առանձնապես բացասաբար է անդրադարձնում փոքր և միջին բիզնեսի գործունեության և մրցակցային պայքարի ապահովման վրա: Պետությունը այս պայմաններում կարող է փոքր և միջին բիզնեսի զարգացման համար ստեղծել առավել բարենպաստ իրավական, տնտեսական և հատկապես հարկային դաշտ: Կարևոր նշանակություն ունի այդ բիզնեսի համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ապահովումը, ինչպես նաև հարկային արտոնությունների ստեղծումը հատկապես մեծ ձեռնարկությունների ձևավորման և գործունեության սկզբնական շրջանում: Մեր կարծիքով, որոշ դեպքերում, օրինակ երիտասարդների կամ հաշմանդամների կողմից փոքր ձեռնարկություն կազմավորելու դեպքում, կարելի է սկզբնական 3-4

⁵ Տե՛ս **А. И. Муравьев, Л. М. Игнатъев, А. Б. Крутик**, *Малый бизнес: экономика, организация, финансы*, СПб., 1999, էջ 22-25:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը..., Եր., 2003, էջ 106:

տարիների համար այդ ձեռնարկությունը ազատել հարկերից: Հարկային բեռի թեթևացմանն ուղղված միջոցառումները, որպես կանոն, նպաստում են փոքր և միջին ձեռնարկատիրության ընդլայնմանը: ՀՀ-ում, որպես այդ քաղաքականության օրինակ, կարող ենք նշել «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում կատարված փոփոխությունները, համաձայն որի թանկարժեք քարերի և ոսկու կիսաֆաբրիկատների արտադրությունում չի գանձվում ավելացված արժեքի հարկը: Արդյունքում, այս ոլորտում մի քանի տարիների ընթացքում դիտարկվում է արտադրության ծավալների աճ 5-7 անգամ⁷: ՀՀ մարզերի տնտեսական զարգացման տեսանկյունից կարելի է մշակել զարգացման ծրագրեր որոշակի մարզերի և տարածաշրջանների համար: Ինչպես ցույց է տալիս Ռուսաստանի Դաշնության փորձը, այնտեղ ռեգիոնների մեծ մասում փոքր և միջին բիզնեսի աջակցմանն ուղղված օրենքները և միջոցառումները զգալի չափով հաշվի են առնում տարածքային առանձնահատկությունները⁸: Կարծում ենք, նման մոտեցումը ընդունելի է նաև մեր հանրապետության համար: Մեծ խթան կարող է հանդիսանալ բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի, արդյունաբերական գոտիների ստեղծումը, որը կարող է նպաստել ձեռնարկությունների միջև կոոպերացիայի ընդլայնմանը, ձեռնարկությունների փորձի և հմտությունների փոխանակմանը, գիտական ծրագրերի զարգացմանը և գործարարության մեջ ներդրմանը: 1998-2002 թթ. ընթացքում պետության կողմից իրականացվել են որոշակի միջոցառումներ ՓՄՁ ոլորտի զարգացման համար: Սակայն, մեր կարծիքով, դրանք բավարար չեն: 2003 թ. փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտին պետության կողմից հատկացվող սուբսիդիաները ՀՀ-ում կազմում են 250 մլն դրամ⁹, որը, հասկանալի է, բավարար չէ այդ ոլորտի գործունեության արդյունավետությունը էապես բարձրացնելու համար:

ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը հնարավորություն կստեղծի բնակչության լայն խմբերին ընդգրկելու շուկայական տնտեսավարման գործընթացներում: Այն կարող է նպաստել ինչպես աշխատատեղերի ավելացմանը, արտադրության ծավալների մեծացմանը և տնտեսական աճին, այնպես էլ սոցիալական շատ հիմնախրդիրների լուծմանը: Մասնավորապես, փոքր և միջին բիզնեսը, մեծ դեր ունենալով բնակչության զբաղվածության կարգավորման հարցում, հասարակության աշխատունակ մի շարք խմբերի համար ապահովում է կայուն և համեմատաբար երաշխավորված եկամուտներ և դրանով իսկ զգալիորեն թուլացնում սոցիալական լարվածությունը: Դա նաև հնարավորություն է տալիս ձևավորելու և ամրապնդելու բնակչության միջին խավ, որը զարգացած հասարակության գործունեության կարևորագույն գործոնն է: Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, փոքր և միջին բիզնեսի արդյունավետ գործունեությունը հնարավորություն կստեղծի կրճատելու բնակչության հարուստ և աղքատ խավերի միջև եկամուտների անհավասարաչափ բաշխման հետևանքով ձևավորված բևեռայնության բարձր աստիճանը, իսկ դա իր հերթին կնպաստի տնտեսական, սոցիալական և քաղաքական կայունությանը:

Քանի որ ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններում զբաղված աշխատուժի կրթական և մասնագիտական մակարդակը բավական բարձր է, ուստի այն կարող ենք համարել բարձր որակավորում ունեցող մասնագետների աշխատանքային գործունեության ոլորտ, միաժամանակ և կարևոր պայման մեր հանրապետությունում գիտական և կրթական բարձր մակարդակ ունեցող այդ բիզնեսի կայուն գործունեության և հետագա ընդլայնման ու զարգացման համար: Վերջին հաշվով դա կնպաստի ՀՀ-ում աշխատանքի ժամանակակից և ճկուն շուկայի ձևավորմանն ու գործունեությանը:

⁷ Տե՛ս Կ. Մշմարիտյան, Առանց տնտեսական զարգացման ծրագրի առաջընթացն անհնար է, «Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա», 2003, № 6, էջ 16:

⁸ Տե՛ս Մ. Еваленко, Региональное преломление общих проблем развития малого предпринимательства в России, «Российский экономический журнал», М., 2003, № 2, էջ 65:

⁹ Տե՛ս «Деловой экспресс», 2003, № 3, էջ 5:

М. Р. ЕГИАЗАРЯН, Л. Г. ХАЧАТРЯН - *Развитие малого и среднего бизнеса как главное направление к разрешению проблемы занятости в Республике Армения.* - Крушение системы центрального планирования в Армении привело к закрытию большинства крупных предприятий. В силу объективных причин, по нашему мнению, в ближайшем будущем крупные предприятия не будут открываться, поэтому в переходной экономике Армении возрастает роль мелких и средних предприятий как главных рычагов разрешения социально-экономических проблем, существующих сейчас. Исследования показывают, что в Армении около 98 % всех действующих предприятий мелкие и средние, и в них вовлечена основная занятая часть населения. Однако, если в развитых капиталистических странах мелкий и средний бизнес действует во всех сферах экономики и его доля в ВВП составляет 65-75 %, то в Армении он в основном действует в сфере торговли и обслуживания и в 2002 г. его доля в ВВП составила только 35 %. Следовательно, необходимы определенные организационные, правовые и экономические меры по урегулированию и развитию мелкого и среднего бизнеса.

Если в развитых странах стимулирование мелкого и среднего бизнеса осуществляется в основном для развития экспорта, наукоемких, научно-технических отраслей, то в Республике Армения оно, в первую очередь, рассматривается как главная мера по разрешению самой крупной задачи в нашей экономике - проблемы занятости.